Օգոստոսի կէսերին, Անիում, նախագահութեամբ ակ. Ա. Թամանեանի, տեղի ունեցաւ խորհրդակցութիւն Կոմիտէի և արշաւախմբի տեղ հասած անդամների՝ կատարելիք աշխատանքների մասին. մշակուեց հետազօտութիւնների գործադրական ծրագիրը, բաժանուեցին աշխատանքները և ամէն ոք անցաւ գործի: Մի խումբ՝ գլխաւորութեամբ Աշխարհբէգ Մելիք-Բալանթարեանի և մասնակցութեամբ ճարտ. Ա. Գալկինի, ճարտ. Լ. Յակոբեանի, լուսանկարիչ Վաղ. Յակոբեանի, ուսանողուհիներ Ս. Մելիք-Բալանթարեանի, Վարս. Յովհաննիսեանի ու Հեղ. Թառայեանի և Ե. Ամիրեանի, Գ. Յակոբեանի ու Մ. Պապայեանի մեկնեց Տիկոր, ուր աշխատեց մի ամիս, մինչև սեպտ. 18, պտտեց ծրագրուած շրջանը — Անի—Արջու—Առիճ—Ալաման—Տիկոր—Խծկոնք (Բէշ-Բիլիսա)—Ադարակ—Ջալալ—Մպնի—Նախճաւան—Բազարան—Մրեն, որտեղից դուրս եկաւ Արագած կայարանը: Իր գիտական ճամբորդութեան ընթացքին խումբը հաւաքեց մեծ քանակութեամբ նիւթեր, կատարեց յուշարձանների մանրամասն չափագրութիւն, քաշեց բազմաթիւ լուսանկարներ, հանեց քանդակների էստամպաժներ, գտաւ մեծ թիւով անյայտ արձանագրութիւններ: Բացի քրիստոնէական հնութիւններից, գլխաւորապէս 5րդ և 7րդ դարերի, խումբը երևան բերեց ընդարձակ ծաւալով և լաւ պահպանուած նախապատմական հնագոյն ժամանակների բնակութեանց և շինութեանց մնացորդներ: Միաժամանակ տեղերում ստեղծուեցին յատուկ մարմիններ՝ ապահովելու համար հնութիւնների պահպանութիւնը:

Անիում կատարուեցին և նկարչական աշխատանքներ՝ նկարիչներ Թարխարարեանը և Մարդարեանը նկարեցին բազմաթիւ արժէքաւոր որմանկարներ:

Երկրորդ խումբը՝ առաջնորդութեամբ Գարեգին եպ.-ի և մասնակցութեամբ ճարտ. Եղիազարեանի և քանդակագործ Պետրոսի մեկնեց Երևանից յուլ. 8-ին և վերադարձաւ 28-ին՝ ունենալով շատ յաջող աշխատանքներ:

Պատերազմը արգելք եղաւ այս աշխատանքներին էլ:

Կառավարութեան հոգածութեան առարկայ էր և Սևանայ լճի նաւարկութիւնը: Սեպտեմբերից սկսած լճի վրա սկսեց բանել առաջին շոգեմակոյկը: Մի քանի շաբաթ յետոյ սկսեց գործել «Աշոտ Երկաթ» «ռազմանաւը» մի արագահարուած թնդանօթով: Հիմք դրուեց մի աւելի մեծ շոգենաւի շինութեան: Սեպտ. 3-ին Շահթախթից Երևան բերուեց «Սեստրիցա Նիւշա» շոգենաւը, որ ռուսները տանում էին Վան և թողել էին կէս ճանապարհին: Նաւը վերանուանուեց «Գեղանոյշ» և նոյնպէս պիտի փոխադրուէր Սևան: Ենթադրւում էր Սևանի բոլոր եզերքները կապել նաւային հաղորդակցութեամբ և հետզհետէ զարգացնել նաւաշնայութիւնը:

Սևանի նաւաշնայութեան ոգին էին Խորհրդարանի անդամ Տիգրան Ծամհուրը — «ծովակալ Սէյմուր» — և երիտասարդ ծովային սպայ Թումանեանը, որ այնպէս դաժանօրէն սպանուեց բոլշևիկների ձեռքով՝ բոլորովին անմեղ տեղը: Հօր՝ պրոֆ. Թումանեանի հետ եկել էր Բեսարաբիայից: